



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2015 թվականի առաջին կիսամյակում (վերլուծություն)

2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 83548 գործարք, որոնց քանակը, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 26.7 %-ով, իսկ 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 16.6 %-ով :

2015 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 22606 օտարման գործարքի 74.7 %-ը կազմել է առուվաճառքը, 24.8 %-ը՝ նվիրատվությունը և 0.5 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 33.7 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 33.3 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2015 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 17.9 %-ով, իսկ 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 8.6 %-ով: 2015 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 5523 առուվաճառքի գործարքի 63.1 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2015 թվականի առաջին կիսամյակում, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 34.2 %-ով, իսկ 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 26.7 %-ով:

2015 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին կիսամյակ 2014 թ.	առաջին կիսամյակ 2015 թ.	երկրորդ կիսամյակ 2014 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	356600	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	282700	282700	282700
Նոր Նորք	252300	253100	252700
Ավան	260100	260500	260200
Էրեբունի	250700	251800	251000
Շենգավիթ	256100	257000	256500
Դավթաշեն	275150	275600	275200
Աջափնյակ	249500	249900	249600
Մալաթիա-Սեբաստիա	242000	243000	242400
Նուբարաշեն	155200	156600	156100
Միջինը Երևանում	273500	274100	273700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2015 թվականի առաջին կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 0.1 %-ով, իսկ 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 0.2%-ով:

2015 թվականի առաջին կիսամյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1866 բնակարան, որոնց քանակը 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 22.6 %-ով, իսկ 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 16.2 %-ով:

2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2014 թ.	առաջին կիսամյակ 2015 թ.	երկրորդ կիսամյակ 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	115700	116000	116000
	Ապարան	57400	57600	57550
	Թալին	65500	65900	65900
Արարատ	Արտաշատ	95850	97700	97000
	Մասիս	115200	115800	115750
	Վեդի	100400	101100	100700
	Արարատ	75350	76100	75500
Արմավիր	Վաղարշապատ	154150	154100	154150
	Արմավիր	121200	121200	121200
	Մեծամոր	87500	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99200	99200	99200
	Գավառ	59800	60000	59850
	Մարտունի	107650	107700	107700
	Վարդենիս	44800	44800	44800
	Ճամբարակ	28700	28700	28700
Լոռի	Վանաձոր	88400	88500	88500
	Ստեփանավան	74500	74600	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	55000	55200	55050
	Տաշիր	47300	47300	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20200	20300	20300
Կոտայք	Արուսյան	155100	155100	155100
	Նոր Հաճն	128600	128500	128600
	Բյուրեղավան	108150	108200	108150
	Եղվարդ	109400	109400	109400
	Հրազդան	63800	63800	63850
	Ծաղկաձոր	292500	292400	292500
	Չարենցավան	85500	85500	85550
Շիրակ	Գյումրի	109300	109200	109300
	Արթիկ	66667	66750	66700
	Մարալիկ	40700	40700	40700
Սյունիք	Գորիս	121900	122900	122500
	Կապան	92400	93700	93150
	Սիսիան	91150	91800	91300
	Մեղրի	80900	81550	81000
	Ագարակ	46900	47200	46900
	Քաջարան	94650	94600	94700
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	94950	95000
	Եղեգնաձոր	125200	125550	125550
	Զերմուկ	112700	112900	112950
Տավուշ	Դիլիջան	113150	113900	113600
	Իջևան	118300	118300	118300
	Բերդ	60200	60200	60250
	Նոյեմբերյան	49900	49900	49900
	Այրում	31850	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 մ² մակերեսի շուկայական միջին գները, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, աճել են 0.1%-ով, իսկ 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 0.3%-ով:

2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 2052 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևանում՝ 604, մարզերում՝ 1448: 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 25.8 %-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 24.2 %-ով, իսկ մարզերում՝ 26.5 %-ով: 2015 թվականի առաջին կիսամյակում, 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 18.6 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 7.9 %-ով, իսկ մարզերում՝ 22.4 %-ով:

2015 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	առաջին կիսամյակ 2014 թ.	առաջին կիսամյակ 2015 թ.	երկրորդ կիսամյակ 2014 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239600	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150600	150800	150800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286600	286700	286700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2015 թվականի առաջին կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, մնացել են անփոփոխ, իսկ 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել են 0.03%-ով:

2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2014 թ.	առաջին կիսամյակ 2015 թ.	երկրորդ կիսամյակ 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94800	94800
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41000	41000
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100200	100000
	Ստեփանավան	90000	90300	90000
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Արուսյան	157000	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	118700	118500
	Արթիկ	63100	63100	63100
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100200	100000
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84500	84500
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11600	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90050	90050
	Եղեգնաձոր	116600	116600	116600
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	113700	113000
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին

գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2014 թվականի երկրորդ կիսամյակի և 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում օտարվել է 9324 միավոր /4730.53 հա/ հող, որից Երևանում՝ 572 միավոր /47.14 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 5838 միավոր /4388.80 հա/, որից Երևանում՝ 46 միավոր /5.38 հա/,

- բնակելի կառուցապատման հող՝ 2296 միավոր /231.67 հա/, որից Երևանում՝ 285 միավոր /21.98 հա/,

- հասարակական կառուցապատման հող՝ 723 միավոր /47.99 հա/, որից Երևանում՝ 223 միավոր /13.61 հա/,

- արդյունաբերական օբյեկտների հող՝ 90 միավոր /25.84 հա/, որից Երևանում՝ 18 միավոր /6.16 հա/,

- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 25 միավոր /17.82 հա/,

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 350 միավոր /18.20 հա/

- ջրային հող՝ 2 միավոր /0.20 հա/ ընդհանուր մակերեսով:

2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 7687 միավորի /4147.09 հա/ նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 460 միավոր /32.75 հա/, նվիրատվության գործարք՝ 1576 միավոր /541.43 հա/, որից Երևանում՝ 100 միավոր /14.03 հա/ և փոխանակության գործարք՝ 61 միավոր /42.01 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /0.36 հա/:

Հանրապետությունում 2015 թվականի առաջին կիսամյակում, 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 14.0 %-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 36.1 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 11.7 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 21.2 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1040.08 հա, որից 1012.96 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 20.0 %-ը կամ 1534 միավորը /811.89 հա/ հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 136 միավոր /7.70 հա/, իսկ 79.3%-ը կամ 6099 միավորը /3302.88 հա/ հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 315 միավոր /25.02 հա/: 2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 54 գործարք /32.32 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարք:

Ստորև ներկայացված են 2015 թվականի առաջին կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	5	1.72	46	4.41	85	1.57	30	2.00	10	3.18	163	8.85	112	10.99
Արագածոտն	46	29.41	6	0.36	4	0.05	22	0.89	282	256.03	2	1.50	111	26.42	7	0.29
Արարատ	58	100.92	9	1.16	66	3.85	35	0.53	509	392.23	4	3.89	228	20.77	20	0.59
Արմավիր	53	435.90	4	0.57	3	0.05	12	0.51	504	577.07	4	1.05	234	24.06	21	0.88
Գեղարքունիք	25	10.41	2	0.84	68	6.24	24	2.99	331	188.56	3	0.15	91	11.29	11	0.60
Լոռի	11	4.44	2	0.10	39	1.21	47	4.05	1612	942.09	2	0.13	37	2.82	20	0.50
Կոտայք	80	72.33	5	2.14	123	7.56	51	2.67	452	280.89	2	1.02	337	28.17	38	8.72
Շիրակ	8	18.09	2	0.98	24	0.40	17	0.48	188	192.42	1	0.03	69	14.46	10	1.11
Սյունիք	2	0.26	6	3.88	16	4.12	9	0.44	174	138.80	2	0.05	45	4.35	7	0.48
Վայոց ձոր	31	46.75	1	0.04	19	2.11	5	0.04	246	122.51	1	0.01	23	2.69	7	0.35
Տավուշ	31	12.51	6	0.66	29	1.58	47	1.57	81	23.17	1	0.03	44	4.20	13	2.23
Ընդամենը	345	731.02	48	12.45	437	31.58	354	15.74	4409	3115.77	32	11.04	1382	148.08	266	26.74

Ստորև ներկայացված են 2015 թվականի առաջին կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և ածուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Ածուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/		
Երևան	79	1.70	3	0.05	32	0.88	44	0.77	57	6.01	0	0.00	2	1.67	14	3.53	41	0.81
Արագածոտն	6	0.035	0	0.00	1	0.00	5	0.03	62	29.24	36	27.99	6	0.36	3	0.04	17	0.85
Արարատ	11	0.04	0	0.00	2	0.01	9	0.03	154	84.42	55	78.92	9	1.16	64	3.83	26	0.51
Արմավիր	7	0.18	3	0.09	1	0.04	3	0.05	61	430.05	49	429.10	1	0.47	2	0.01	9	0.47
Գեղարքունիք	8	0.46	0	0.00	6	0.42	2	0.04	108	19.90	22	10.29	2	0.84	62	5.82	22	2.95
Լոռի	20	1.20	0	0.00	5	0.03	15	1.17	78	8.08	10	3.94	2	0.10	34	1.17	32	2.87
Կոտայք	18	0.442	1	0.002	14	0.40	3	0.04	239	83.22	78	71.28	4	2.14	109	7.17	48	2.63
Շիրակ	14	0.13	0	0.00	9	0.04	5	0.09	37	19.82	8	18.09	2	0.98	15	0.36	12	0.39
Սյունիք	10	0.13	0	0.00	9	0.04	1	0.09	22	8.57	1	0.24	6	3.88	7	4.09	8	0.36
Վայոց ձոր	3	0.031	0	0.00	1	0.001	2	0.03	53	48.905	31	46.75	1	0.04	18	2.11	3	0.005
Տավուշ	10	0.33	0	0.00	5	0.15	5	0.18	101	15.91	29	12.42	6	0.66	24	1.43	42	1.40
Ընդամենը	186	4.68	7	0.14	85	2.02	94	2.52	972	754.13	319	699.02	41	12.30	352	29.56	260	13.25

Հանրապետությունում 2015 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 26 գործարք /31.99 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2015 թվականի առաջին կիսամյակում, 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 4.1 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 20.8 %-ով, իսկ մարզերում՝ 2.8 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 23.6 %-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 4.9 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 23.5 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.4 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2015 թվականի առաջին կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	32	25.78	72.1	1400.0	629.5	180	144.09	365.0	12000.0	3710.5
Ապարան	2	0.21	1055.1	1157.7	1106.4	4	2.96	86.5	2727.3	653.6
Թալին						59	59.27	93.6	5494.5	777.0
Ծաղկահովիտ	2	2.01	72.5	191.3	131.9	21	41.74	79.5	1000.0	340.5
Արարատի մարզ										
Արտաշատ	30	21.30	68.7	3346.7	1150.8	250	73.94	335.1	10833.3	2593.2
Մասիս	4	4.31	67.8	6002.2	2516.3	41	26.03	200.0	11904.8	3082.1
Վեդի	21	53.31	58.6	3080.3	268.4	208	238.25	207.0	10795.1	1799.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	18	66.20	30.5	87.9	69.2	239	173.63	294.3	9090.0	1214.2
Բաղրամյան	24	359.99	67.5	1217.7	481.1	68	308.55	90.6	2561.1	878.1
Վաղարշապատ	7	2.91	84.0	1681.7	944.7	184	85.02	444.4	11764.7	1929.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	4.74	680.0	2000.0	1340.0	187	56.35	199.8	1875.0	455.1
Ճամբարակ	1	0.12	1811.7	1811.7	1811.7	8	8.01	60.5	953.3	352.5
Մարտունի	13	2.01	130.0	2257.7	457.1	40	5.82	51.1	2850.0	793.7
Սևան	6	3.43	172.5	1221.0	706.2	53	16.57	52.2	2134.8	335.8
Վարդենիս						43	101.81	41.2	2575.1	422.4
Լոռու մարզ										
Ալավերդի	4	0.42	167.2	16435.6	5944.4	351	91.07	170.4	6424.2	603.3
Գուգարք	2	0.18	1241.1	1380.9	1311.0	74	22.84	234.6	6065.9	784.4
Սայիտակ						28	9.17	250.0	5555.5	702.2
Ստեփանավան	2	1.24	932.5	932.8	932.7	23	20.91	90.6	1686.6	378.1
Տաշիր	2	2.10	167.8	511.3	339.6	1128	788.80	45.3	1384.4	180.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	24	10.32	97.4	6887.9	2672.9	143	66.69	279.3	11942.7	4023.0
Եղվարդ	36	49.13	78.2	2367.1	662.0	224	142.53	174.4	11971.8	2390.3
Հրազդան	18	11.83	85.5	1191.0	673.0	79	42.64	130.5	10256.4	1180.9
Շիրակի մարզ										
Ախուրյան						72	61.53	252.0	1693.1	618.4
Ամասիա	1	3.00	151.8	151.8	151.8	10	26.73	40.9	261.0	130.7

Անի	1	5.27	103.7	103.7	103.7	55	62.84	110.6	546.9	451.6
Աշոցք						6	8.35	58.5	215.8	136.9
Արթիկ	6	9.82	209.0	660.0	320.6	45	32.98	79.4	1428.6	491.8
Սյունիքի մարզ										
Գորիս						33	34.09	92.6	1023.2	784.5
Կապան						12	22.43	120.0	841.6	399.2
Մեղրի	1	0.24	360.5	360.5	360.5	12	2.52	193.0	3000.0	750.5
Սիսիան						116	78.27	46.3	1977.4	586.8
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	13	21.24	21.7	755.7	156.8	38	17.86	125.0	10000.0	1850.0
Վայք	18	25.51	72.0	13239.1	2343.6	208	104.66	58.8	1430.7	618.5
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.70	235.7	235.7	235.7	33	5.16	213.3	3783.8	677.5
Իջևան	20	9.72	140.7	1884.5	546.6	20	4.60	267.5	9454.5	1363.3
Նոյեմբերյան	8	2.00	166.8	2922.7	1091.1	27	12.97	46.7	7368.4	970.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2015 թվականի առաջին կիսամյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	437.5	4825.9	5000.0	4942.0	69	60419.9	130.7	22200.0	2586.0
Ապարան						7	6060.0	124.1	609.6	390.4
Թալին						7	9031.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						1	1628.0	60.0	214.3	93.0
Արարատի մարզ										
Արտաշատ	17	13569.3	346.2	5547.8	1936.0	65	70473.1	173.9	7140.3	904.9
Մասիս	43	23370.2	1957.1	5082.9	2929.7	102	80019.1	187.5	25000.0	1210.5
Վեդի	4	1396.2	1271.7	2500.0	1830.4	57	53645.2	126.1	5000.0	663.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	2	123.0	1322.2	2940.0	2131.1	80	88211.6	131.6	9090.9	1214.1
Բաղրամյան						5	5050.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						143	140212.8	197.4	26528.4	1530.7
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	21	27983.6	172.6	191.8	187.7	18	20853.9	186.6	1084.3	684.0
Ճամբարակ	3	122.5	312.5	384.8	360.0	5	8430.0	71.3	2286.2	147.5
Մարտունի	24	27846.0	165.1	833.3	330.2	51	60428.6	119.3	5000.0	282.5
Սևան	2	72.0	2200.0	2300.0	2250.0	4	3956.5	240.0	3110.4	331.7
Վարդենիս	12	2188.5	66.6	600.0	361.9	12	18161.8	72.5	987.2	150.2
Լոռու մարզ										
Ալավերդի	19	2091.7	244.2	1725.0	1293.0	8	7083.8	114.3	1388.9	217.3
Գուգարք	6	1678.8	258.0	2297.3	1959.2	12	7320.0	77.9	14083.3	1260.4
Սպիտակ	7	7742.0	145.3	244.6	195.2	5	4350.0	104.9	1348.3	207.6
Ստեփանավան						6	6458.0	88.2	1666.7	175.9
Տաշիր	2	214.7	297.0	300.0	298.3	3	1771.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										

Արույան	88	60209.2	640.0	5647.9	3101.0	191	155594.4	264.5	35353.5	1991.7
Եղվարդ	20	10721.7	232.0	5041.5	2851.6	122	106695.4	173.6	27000.0	2864.1
Հրազդան	1	720.0	243.1	243.1	243.1	20	15333.0	117.7	34848.5	1319.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	12	3221.0	174.2	10482.5	4752.5	33	102732.7	113.6	18750.0	335.1
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						5	5905.3	67.9	180.6	194.5
Աշոցք						1	6750.0	40.8	144.0	65.0
Արթիկ	3	365.0	300.0	2875.1	1975.0	29	29234.0	111.8	5000.0	218.4
Սյունիքի մարզ										
Գորիս						16	14405.0	112.2	1700.0	365.7
Կապան	5	39897.6	115.2	1190.2	782.3	6	8655.0	67.9	2638.9	342.7
Մեղրի	2	954.0	305.9	1081.8	693.9	16	12513.9	68.5	632.9	245.4
Սիսիան						6	6820.0	123.5	875.0	231.9
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	15	19200.0	56.7	1038.8	546.1	18	20875.2	96.7	7659.6	509.3
Վայք	3	1912.0	851.6	1325.2	1203.7	5	6069.0	120.7	1448.3	244.7
Տավուշի մարզ										
Բերդ	1	583.3	550.3	550.3	550.3	2	734.7	75.8	810.0	125.3
Իջևան	19	12203.0	255.9	3000.0	2546.3	35	32964.9	74.1	14423.1	532.8
Նոյեմբերյան	4	1499.1	250.0	900.0	399.3	6	7089.9	125.0	1948.1	245.0

2015 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3474 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.2 %-ը:

2015 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 16.4 %-ով, իսկ 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 15.3 %-ով :

2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 302 բնակարանի, 262 անհատական բնակելի տան, 1648 հասարակական և 355 արտադրական նշանակության օբյեկտի, 827 միավոր հողի, 4 այգետնակի և 76 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2015 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 34 վարձակալության գործարքի քանակը, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, աճել է 17.2 %-ով, իսկ 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ նվազել 15.0 %-ով:

2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում վարձակալված 3404.30 հա հողից 2.19 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 3402.11 հա հողի 2355.77 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 43.53 հա՝ արդյունաբերական օբյեկտի, 947.01 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Սյունիքի մարզում՝ 1175.82 հա, որից 216.43 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7413 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.9 %: 2015 թվականի առաջին կիսամյակում գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 43.5 %-ով , իսկ 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 39.0 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանի /51.0 %/, անհատական բնակելի տան /22.7 %/, հասարակական նշանակության օբյեկտի /10.6 %/ և հողի /10.1 %/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4184 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 43.6 %-ով, իսկ 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 37.5 %-ով:

2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 609 գործարք, որից 447 Երևանում: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 32.4 %-ով, ընդ որում Երևանում՝ 25.4 %-ով, իսկ մարզերում՝ 46.4 %-ով: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, նվազել է 39.2 %-ով, ընդ որում Երևանում՝ 8.7 %-ով, իսկ մարզերում՝ 51.5 %-ով:

2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում գրավադրվել է 2063.37 հա մակերեսով հող, որից 73.76 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողի 94.4 % կամ 1948.49 հա գյուղատնտեսական նշանակության է, որից Երևանում՝ 1.53 հա: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արմավիրի մարզում՝ 1283.11 հա, որից 1281.59 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 10364 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 12.6 %-ով, իսկ 2014 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 2.2 %-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.4 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /25.4 %/:

«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե